

Գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովի հերթական նիստին մասնակցել է  
ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը

Մ/թ հուլիսի 11-ին Վայոց ձորի մարզպետարանում տեղի ունեցավ մարզում  
գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի հերթական նիստը, որը  
վարում էր հանձնաժողովի նախագահ, Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս  
Հարությունյանը:

Նիստում քննարկվեցին հետևյալ հարցերը.  
ա/2013թ. առաջին կիսամյակի ընթացքում գենդերային ուղղվածությամբ մարզում  
իրականացված աշխատանքների արդյունքները:  
բ/ Վայոց ձորի մարզային գենդերային հարցերով զբաղվող մշտական  
հանձնաժողովների կարողությունների գնահատում և վերապատրաստման  
խնդիրների և ձևերի նախապատրաստում:

Օրակարգի հարցերի քննարկմանը մասնակցեցին մարզպետարանի աշխատակազմի  
համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներ և աշխատակիցներ,  
համայնքների ղեկավարներ, Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի  
Վայոց ձորի մարզային գրասենյակի, մարզային լրատվամիջոցների  
ներկայացուցիչներ:

Նիստի բանախոսներն էին ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի կանանց և  
երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հարցերով բաժնի  
պետ Արմինե Թանաշյանը, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների  
ազգային ինստիտուտի սոցիալական աջակցության բաժնի պետ Արմինե  
Մխիթարյանը և նույն ինստիտուտի կադրերի վերապատրաստման և  
մասնագիտական ուսուցման բաժնի պետ Նարինե Դավթյանը: